ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1.1

«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի
(Հայտարարության և հրավեի տեքստում փոփոխություններ կատարելու և փոփոխված տեսքտը հաստատելու մասին)

ք. Երևան *02.10.2019թ.*
Ժամը՝ 10^{00}-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Բաբայան

Անդամներ՝ Դավիթ Մուրադյան
Մանուկ Սահակյան
Հայկ Խուրշուդյան
Արթուր Նահապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հասմիկ Ղազարյան

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կարիքների համար տեսահսկողության համակարգի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հրավերի և հայտարարության տեքստում փոփոխություններ կատարելու մասին:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության շենքում, ք. Երևան, Մաշտոց 47 հասցեում՝ *2019 թվականի հոկտեմբերի 02-ին, ժամը 10 ^{00}-ին:*

Օրակարգում՝

«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ստացված պարզաբանման քննարկում և գնում կատարելու հրավերի և հայտարարության փոփոխված տեքստի հաստատում:

1. Հանձնաժողովին քարտուղարը ներկայացրեց, որ armeps.am համակարգով ստացվել է պարզաբանման հարցում՝ ապրանքի տեխնիկական բնութագրի շտկումների վերաբերյալ, ինչպես նաև հարցում ներկայացնողը պահանջում է կառույցի տարածքի գծագիրը ՝ չափերով:

Քարտուղարը ներկայացրեց, որ հրավերում իսկապես թույլ է տրվել տեխնիկական վրիպակ՝

Հրավերի տեխնիկական բնութագրի մեջ անհրաժեշտ արտաքին ցանցային տեսախցիկը 1920x1080 պիքսելի փոխարեն նշվել է «2560x1920», բացի այդ, բոլոր «DC12Վ և/կամ...»- ի փոխորեն առաջարկվում է գրել «DC12Վ և/կամ....»:

Քննարկելով վերոհիշյալը, հանձնաժողովի նախագահը առաջարկեց հրավերի տեքստում կատարել տեխնիկական բնութագրի և հայտերի բացման ժամկետի շտկում, մասնավորապես.

1) Տեխնիկական բնութագրի մեջ 3-րդ, 4-րդ և 10-րդ կետերում անհրաժեշտ արտաքին ցանցային տեսախցիկը «2560x1920 պիքսել»-ից փոփոխել «1920x1080 պիքսելի»:

2) Տեխնիկական բնութագրի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 10-րդ «DC12Վ կամ...»- ի փոխարեն գրել «DC12Վ և/կամ....»:

3) Տեխնիկական բնութագրի 10-րդ կետում «անալոգային» բառից հետո ավելացնել «(4 հատ անալոգային տեսախցիկները միացվելու են այլ տեսաձայնագրիչի)»:

4) Ընթացակարգի հայտերի բացման ժամկետը սահմանել հրավերի հրապարակման հաջորդ օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը «12:00»-ի փոխարեն նշել հոկտեմբերի 09–ը ժամը «12:00»-ը:

5) Տարածքի գծագրի տրամադրման վերաբերյալ հարցումը մերժել՝ գծագրի բացակայության պատճառով:

2. Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց հրավերի փոփոխված տեքստը, և հանձնաժողովը միաձայն որոշեց՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետի դրույթներով՝ հաստատել ՀՀ պետական վերահսկողական ծառայության կարիքների համար տեսահսկողության համակարգի ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնանշման հարցման** միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստի փոփոխությունը հրապարակել *03.10.2019թ http://www.armeps.am/ կայքով* :

3. *Հայտերի բացման վերջնաժամկետը դարձնել* ***2019 թվականի հոկտեմբերի 09-ը, ժամը 12:00****:*

Նիստին ներկա հանձնաժողովի 5 անդամներից կողմ քվեարկեցին 5-ը, դեմ՝ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անունները, ազգանունները, ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Ա. Բաբայան

Անդամներ՝ ---------- Դ. Մուրադյան

---------- Մ. Սահակյան

---------- Ա. Նահապետյան

---------- Հ. Խուրշուդյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Հ. Ղազարյան